ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԻԵՆՆԱ

ՀՈՒՆԻՍ 26, ՀԻԳՇԱԲԹԻ

ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 26-ին, երեկոյան ժամը 16.00-ին, Վեհափառ Հայրապետը Գրացում իր առաքելությունն ավարտելուց հետո, սկսեց իր անդրանիկ հովվապետական այցելությունը Վիեննայի հայ համայնքին: Նորին Սրբությունը Վիեննա ժամանեց երեկոյան ժամը 18.00-ին, առաջնորդվեց «Imperial», հյուրանոցի սրահներից մեկը, որտեղ կապվակերպվել էր հանդիպում Ավստրիայի Հանրապետության եկեղեցական, պետական, և դիվանագիտական ներկայացուցիչների հետ:

Նորին Սրբությանը բարի գալուստ մաղթելու էին եկել Վիեննայի նախկին արքեպիսկոպոս կարդինալ Քյոնիգը, Վիեննայի արքեպիսկոպոս Շյոնբյոռնը, սասրի, բուլղար, լութերական Եկեղեցիների ներկայացուցիչները, Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Ոսկանյանը և խորհրդական Սամվել Մկրտչյանը, Ավստրիայի Հանրապետության կրոնից նախարարության ներկայացուցիչը, Վիեննայի ազգային գրադարանի տնօրենը, «Pro Oriente» հաստատության նախագահը, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Լիբանանի, Սիրիայի, Հունաստանի դեսպանները, Ավստրիահայոց եկեղեցական վարչության անդամները, Վիեննայի Համալսարանի պրոֆեսորներ և պետական-պաշտոնական այլ անձնավորություններ:

Ընդունելության ընթացքում Ավստրիայի հայոց Առաջնորդ Մեսրոպ արք. Գրիգորյանը բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին, ապա ներկաներին շատ սեղմ գծերով ծանոթացրեց Հայոց Հայրապետի կենսագրությանը և ներկայացրեց Նորին Սրբության Ավստրիա այցելության նպատակները:

Այնուհետև Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց այսպիսի ջերմ և անկեղծ ընդունելության համար, հանգամանալից խոսեց իր այս այցի մասին և մաղթեց, որ Աստված օրհնի և ամրապնդի սերտացնի Ավստրիայի և Հայաստանի թե՛ Հանրապետությունների և թե՛ Եկեղեցիների ու ժողովուրդների հարաբերությունները:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.00-ին, Վեհափառ Հայրապետը Վիեննայի արքեպիսկոպոսական պալատում ընթրիքի հյուրը եղավ դոկտ. Քրիստոֆ Շյոնբյոռն Վիեննայի արքեպիսկոպոսի:

ՀՈՒՆԻՍ 27, ՈՒՐԲԱԹ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Առավոտյան ժամը 11.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Վիեննայի քաղաքապետարան, որտեղ մեծ ընդունելություն էր կազմակերպված ի պատիվ Նորին Սրբության:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԻԵՆՆԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔՐԻՍՏՈՖԵՐ
ՇՅՈՆԲՅՈՌՆԻ ՀԵՏ

ՏՂԷ ՎՈՍԼԱՍԻՈՎԼԳԺՄՈ ՂՍՍԵԺՂՍԵՉ ԻՉ ՎԵՎՂՍԵԺ ՇՈՂՎԼՄՈԻ

ՈՍԼԱՍԻՈՎԼԳԺՄՈ ՂՎԻՊՄՈ ՎԵՈՂՂԳՎԻ ՅՏԳԼՈՄԺԵՈԷ ՍՈՓՈԷԳԻ

Քաղաքապետարանի մուտքին Վեհափառ Հայրապետը դիմավորվեց քաղաքապետ պրն. Հոյպլի և քաղաքապետարանի ամբողջ աշխատակազմի կողմից: Ապա ընդունելությունների սրահում Հայոց Հայրապետին բարի գալուստ և Վիեննայում գտնվելու ընթացքում բարի կեցություն մաղթեց պրն. Հոյպլը, որը նաև պատմական փոքրիկ ակնարկ կատարեց Վիեննայում հայկական կյանքի սկզբնավորման ու զարգացման վերաբերյալ:

Այնուհետև պատասխան խոսքում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Վիեննայում հայերի նկատմամբ հյուրընկալ և սիրալիր վերաբերմունքի համար, ավելացնելով, որ «Վիեննան ոչ միայն գեղեցիկ ճարտարապետական կոթողներով, մշակույթով, արվեստով հարուստ և դրավիչ քաղաք է, այլև հատկապես առինքնող է իր ներքին բովանդակությամբ, որովհետև այն քաղաք է մարդկային հարաբերությունների, երկխոսության, փոխադարձ հասկացողության: Վիեննան մի տեսակ դարձել է խաղաղության և բարի կամեցողության դեպի աշխարհ ներթափանցման լուսամուտը»:

Փոքրիկ հյուրասիրությունից հետո Նորին Սրբությունն իր տպավորությունները, մաղթանքներն ու ստորագրությունը թողեց քաղաքապետարանի «Ոսկե մատյան»-ում:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ «PRO ORIENTE»

Քաղաքապետարանի ընդունելությունից հետո, ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Սկզբային գրադարանի ընդհանուր տնօրեն դոկտ. Իոհան Մարտեի, «Pro Oriente»-ի ընդհանուր քարտուղար Ֆրանց Գշվանտնրրի և այս ինստիտուտում պաշտոնավարող Եգիպտոսում նախկին դեսպան դոկտ. Բերնհարդ Շտիլֆրիդի, այցելեց Կաթոլիկ Եկեղեցու էկումենիկ «Pro Oriente» ինստիտուտ, որտեղ հանդիպեց ինստիտուտի հիմնադիր, Վիեննայի նախկին արքեպիսկոպոս կարդինալ Քյոնիգի հետ:

Վեհափառ Հայրապետն այստեղ մտերմիկ զրույց ունեցավ կարդինալ Քյոնիգի և ինստիտուտի պատասխանատուների հետ կրթական, մշակութային, հոգևոր կյանքի և էկումենական հարաբերությունների զարգացման վերաբերյալ: Նորին Սրբությունը խոսեց Հայ Եկեղեցու այսօրվա կացության մասին, շեշտելով, որ Հայ Եկեղեցին օրեցօր վերագտնում է իր ներքին աշխուժությունը և ավելի ու ավելի պիտի սերտացնի հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԿՈՂՄԻՑ

Կեսօրից հետո, ժամը 13.30-ին, Արտաքին գործոց նախարարության ընդհանուր քարտուղարության կողմից տրվեց ճաշկերույթ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ներկա էին Արտաքին գործոց ընդհանուր քարտուղարը, Վիեննայի արքեպիսկոպոս Քրիստոֆ Շյոնբյոռնը, կարդինալ Քյոնիգը, Վիեննայում Վատիկանի պապական նվիրակը, Մեսրոպ արք. Գրիգորյանը, ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանը, «Pro Oriente»-ի պատասխանատուները, Լիբանանի դեսպանը և պետական այլ անձնավորություններ:

Ճաշկերույթի ընթացքում տեղի ունեցավ ջերմ զրույց, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը ծանոթություններ տվեց Հայ Եկեղեցու մասին, ներկայացրեց Արցախյան հարցը ողջ տարողությամբ և կոչ արեց, որ Սվստրիայի Հանրապետությունը իր կարելին ներդնի Հայաստանի տնտեսական զարգացման ու արցախյան հիմնախնդրի արդար և խաղաղ լուծման ուղղությամբ:

ՏՈՆԱՀԱՆԴԵՍ «PRO ORIENTE»-Ի ԿՈՂՄԻՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Երեկոյան ժամը 19.00-ին «Pro Oriente»-ի կողմից կազմակերպվել էր տոնահանդես Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության առիթով: Նախքան տոնահանդեսը, Նորին Սրբությունն առաջնորդվեց ընդհանուր քարտուղարի սենյակ, որտեղ գրադարանի ընդհանուր պատասխանատուն Վեհափառ Հայրապետին ցույց տվեց Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» երկի ինքնագիր սևագիր օրինակներից մեկը, ԺԸ դարի Վաղարշապատում գրված ձեռագիր «Մաշտոց» և շատ հին հունական մի ձեռագիր:

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Ազգային Գրադարանի ամենաշքեղ և լայնարձակ սրահ, ուր և տեղի ունեցավ տոնահանդեսի պաշտոնական մասը:

Ներկա էին Վիեննայի արքեպիսկոպոս Քրիստոֆ Շյոնբյոռնը, կարդինալ Քյոնիգը և Կաթոլիկ Եկեղեցու այլ հոգևորականներ, Ղպտի, Ասորի, Բուլղար և Լութերական Եկեղեցիների հոգևորականներ, ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանը, կանանց երկրների դիվանագիտական ներկայացուցիչներ և բարձրաստիճան շուրջ 300 հրավիրյալներ, հյուրեր:

Տոնահանդեսի բացումը կատարեց և ողջույնի խոսքով հանդես եկավ Ազգային Գրադարանի տնօրեն դոկտ. Յոհան Մարտենը, որի խոսքի ավարտին երգչախմբի կատարմամբ հնչեց Ֆրանց Շուբերտի կատարումներից մեկը:

Ապա «Հայերի դերը Էկումենիկ շարժման մեջ» թեմայով ընդարձակ դասախոսություն կարդաց «Pro Oriente»-ի նախագահ դոկտ. Շտիրմանը, որը ներկայացրեց Վեհափառ Հայրապետին և նրա գործունեությունը ընդհանուր միջեկեղեցական շարժման մեջ, ապա խոսեց այն բոլոր հայ հոգևորականների մասին, ովքեր իրենց գործունեությամբ առնչվել են «Pro Oriente»-ի հետ և մասնակցել Եկեղեցիների միջև հարաբերությունների սերտացման, փոխադարձ ծանոթության ու հասկացողության գործին:

Իր խոսքում դոկտ. Շտիրմանն անդրադարձավ նաև Գարեգին Կաթողիկոսի ջանքերով սկսած միջեկեղեցական նոր շարժմանը՝ երկխոսություն Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հետ և մեծ ծավալով աշխատանքային մասնակցություն էկումենիկ բոլոր կառույցներում: Մեծահարգ դոկտորը նշեց նաև Գրացի Բ համաժողովին Վեհափառ Հայրապետի բանախոսության և նրա անդրադարձների մասին, որ մեծ ընդունելություն է գտել Եկեղեցական ամենալայն շրջանակներում, որպես նոր մոտեցում ընդհանուր քրիստոնեական հարցերին, ներկա ժամանակաշրջանի առաջադրած խնդիրների լուծման ճանապարհին:

Վերջում պրն. Շտիրմանը բարի գալուստ մաղթեց և շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանն այս այցելության առթիվ:

Երգչախմբի կատարած երգեցողությունից հետո, մեկ այլ դասախոսությամբ՝ «Հայ Եկեղեցու և ժողովրդի դերը Ավստրիայի և ընդհանուր Եվրոպայի կյանքում», հանդես եկավ դոկտ. Հերալդ Հինտերեգգերը, որը նախկինում եղել է Ավստրիայի Հանրապետության դեսպանը Մոսկվայում և այժմ պաշտոնավարում է «Pro Oriente»-ում:

Նա ներկաներին նախ ծանոթացրեց Նորին Սրբության կենսագրական մանրամասների հետ, ապա ընդհանուր ակնարկ կատարեց Հայ Եկեղեցու և ժողովրդի Եվրոպայի ժողովուրդների կյանքում բերած նպաստի մասին: Խոսեց հայ հոգևոր կյանքի, մշակույթի և արվեստի մասին՝ հանգամանորեն ներկայացնելով կարգացման փուլերը: Վերջում պրն. Հինտենեգգերը ներկայացրեց Հայ Եկեղեցու ներկայիս գործունեությունը թե՛ ընդհանրապես Եվրոպայում և թե՛ մասնավորապես Ավստրիայում միջեկեղեցական և մշակութային կյանքի ծիրի մեջ:

Այս բոլոր դասախոսություններից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը նախ շնորհակալություն հայտնեց այսպես գեղեցիկ կազմակերպած հանդեսի և հայ ժողովրդի վաստակի մասին արտասանված խոսքերի համար: Ապա, շարունակելով խոսքը, Հայոց Հայրապետն ասաց, որ «Եկեղեցուց հետո իմ կյանքն անցել է համալսարաններում և գրադարաններում և ես այստեղ՝ այս գրքերի շրջապատի մեջ շատ հարազատ եմ զգում: Սակայն այս պահին ուզում եմ հիշել իմ երջանկահիշատակ նախորդներից Խրիմյան Հայրիկին, որ սրանից շուրջ հարյուր տարիներ առաջ անցել է այս վայրերով իր ժողովրդի ազատագրության երազանքի իրականացման մեծ տեսիլքով, բայց ցավոք այդպես էլ չկարողացավ հասնել իր ցանկությանը: Եվ այսօր, երբ այդ երազանքը մարմին է առել և դարձել իրականություն, ես, որպես ազատ ու անկախ Հայաստանում ընտրված առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց, գալիս եմ Եկեղեցիների միջև առաջ եկած համագործակցության և երկխոսության շարժմանը Հայ Եկեղեցու նպաստը բերելու նպատակով:

Մենք այսօր, բոլորս միասին, նոր էջ ենք գրում և պատմության մեջ պիտի թողնենք մեր կնիքը: Պատմությունը կա, գոյություն ունի, բայց մենք ի՞նչ ենք անում պատմության համար: Պատմությունն չի նշանակում անցյալի վերհուշ և սոսկ թվերի ու դեպքերի արձանագրություն, այլ այն շարժում է ու փոփոխություն: Եվ այն փոփոխելու և շարժելու հերթը այսօր մերն է: Հետևաբար, պարտավոր ենք Աստուծո և մարդկության աչքի առջև փորձել գտնել ու սրբագրել անցյալի սխալները:

Ես մաղթում եմ, որ «Pro Oriente» ինստիտուտը ինչպես որ կա, դառնա առավել աշխույժ և գործուն եկեղեցիների միջև փոխադարձ հասկացողության ոգին աղբերացնելու Աստվածահաճո գործի մեջ»:

Վեհափառ Հայրապետն իր բանախոսական ելույթում առանձնապես անդրադարձավ Հայ Եկեղեցու յուրահատուկ նկարագրին և հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաև ընդհանուր քրիստոնյա աշխարհում նրա կատարած հոգևոր-մշակութային և ազգային ու քաղաքական դերին: Նորին Սրբության խոսքը ողջունվեց բուռն ծափահարություններով:

Վերջում Վիեննայի արքեպիսկոպոս Քրիստոֆ Շոնբորնը, շնորհա-

կալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին այս առիթի ընծայման համար, գերմաներեն թարգմանությամբ արտասանեց Միսաք Մեծարենցի «Տուր ինձի Տէր ուրախութիւնն անանձնական» բանաստեղծությունը՝ ասելով. «Պոետը խոսեց իմ փոխարեն: Շնորհակալություն»:

Տոնահանդեսի ավարտից հետո կազմակերպվել էր հյուրասիրություն, որի ընթացքում ներկաները հնարավորություն ունեցան առավել մոտից շփվելու և ծանոթանալու Հայոց Հայրապետի հետ:

ՀՈՒՆԻՍ 28, ՇԱԲԱԹ

Հունիսի 28-ի առավոտյան ժամը 09.00-ին Վեհափառ Հայրապետը, Վիեննայի արքեպիսկոպոս Քրիստոֆ Շոնբյոռնի հրավերով, հռչակավոր Շտեֆանսդոմ Մայր տաճարում ներկա գտնվեց Ս. Պատարագի և հինգ ընծայացուների քահանայական ձեռնադրության արարողությանը:

Պատարագի ընթացքում պատարագիչ և ձեռնադրող Շոնբյոռն արքեպիսկոպոսը բազմահազար հավատացյալներին ներկայացրեց Հայոց Հայրապետին, նշելով, որ «սա առաջին դեպքն է, երբ մի ուղղափառ եկեղեցու Պետ ներկա է գտնվում այսպիսի արարողության»: Ապա նա հանգամանորեն անդրադարձավ Հայ Եկեղեցու և ժողովրդի անցած ուղուն, նրա մարտիրոսություններին և նահատակություններին վասն հավատո, ինչպես նաև այդ հավատքով գործած մշակութային և հոգևոր վկայություններին:

Վերջում Նորին Գերազանցությունը շնորհակալություն հայտնեց Գարեգին Վեհափառին, որ ներկա գտնվեց և իր ներկայությամբ նոր շքեղություն ու փայլ հաղորդեց այս ձեռնադրության արարողությանը. «Ձեր այս մասնակցությունը վեր է բոլոր խոսքերից, քանի որ Դուք արդեն իսկ գործով վկայում եք համեղբայրության և մեկ Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին միասին ծառայելու մասին: Ես համոզված եմ, որ այս պահը անջնջելի կլինի նորընծաների համար և նրանք երբեք պիտի չմոռանան, որ իրենց ծառայության սկիզբը օրհնվել է Հայ եկեղեցու Հայրապետի կողմից՝ մի եկեղեցի, որ ահավասիկ 1700 տարիներ անսակարկ կերպով, բազում դժվարությունների ու տառապանքների դնով վկայում է մեր Տեր Հիսուս Քրիստոսին»,- եզրափակեց Շոնբյոռն արքեպիսկոպոսը և հրավիրեց Նորին Սրբությանը իր պատգամը տալու նորընծաներին և ողջ հավատացյալ ժողովրդին:

Վեհափառ Հայրապետը նախ գոհություն և փառք տվեց Աստծուն այս առթիվ, ինչպես նաև, իրենց ժողովրդին ծառայելու պատրաստակամ նոր մշակների կոչման համար: Ապա Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց Շոնբյոռն արքեպիսկոպոսին Հայ Եկեղեցուն և ժողովրդին ուղղված բարի և ջերմ խոսքերի համար և շնորհավորեց նրան այս ձեռնադրության առիթով: Այնուհետև Հայոց Հայրապետն իր խոսքն ուղղելով նորընծաներին՝ ասաց. «Սիրելիներ, մենք Աստուծո դեսպաններն ենք այս երկրի վրա, հետևաբար չլինենք այնպիսին, որ մեր պատճառով ժողովրդի մեջ արհամարհվի Աստուծո անունը: Ձեռնադրվելը մեծ ծառայություն է՝ ծառայություն ի պատիվ Աստուծո, հետևաբար այդ ծառայությունը կատարենք անշահախնդիր ու անսակարկ կերպով: Ես,

որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, շնորհավորում եմ ձեզ և մաղթում, որ Քրիստոսի լուծը կրեք արժանավորապես:

Երկրորդ խոսքս ուղղում եմ ծնողներին, որ քաջություն ունեցան իրենց զավակներին ընծայելու Աստծուն և ժողովրդին: Դուք մեծ զոհողության եք գնում ձեր զավակների այսպիսի ընծայում կատարելով, բայց վստահ եղեք, որ դուք Աստուծո այս մեծ գործի համար նրանց ոչ թե կորցրել եք, այլ շահել:

Երրորդ խոսքս ուղղում եմ այստեղ համախումբ հավաքված այս մանուկներին ու երիտասարդներին, որ այսպես պայծառորեն հնչեցնում են Աստծո խոսքը այս չքեղաշուք տաճարի կամարների տակ: Ես ձեզ ասում եմ՝ Ապրե՛ք, որ սիրով գալիս և ծաղկեցնում եք Աստուծո Տունը, որովհետև դրանով դուք է, որ զորանում եք: Ձեզ նման հազարավոր երիտասարդներ կան աշխարհում, որոնք ով դիտե, գուցե հենց այս վայրկյանին հազար տեսակ ժամանակավոր հաճույքների ետևից են ընկած: Սակայն դուք թողած ամեն բան եկել եք ձեր աղոթքը կատարելու և շենացնելու Աստուծո այս մեծ անդաստանը: Թող ձեր միջից ևս Աստված նոր մշակներ հանի իր առատացող հունձի համար:

Ես ևս մեկ անգամ իմ շնորհակալություններն եմ հայտնում Նորին Գերազանցությանը, մաղթում, որ իր մականի ներքո հովվող ժողովուրդը առավել լցվի Աստուծո շնորհներով:

Օրհնում եմ նաև ձեզ, սիրելի հավատացյալներ, որպեսզի ձեր աղոթքներով ու աշխատանքով զորավիգ ու սատար լինեք ձեր հոգևորականներին, որոնք պիտի լծվեն ձեզ ծառայելու Աստուծո փառքի, Եկեղեցու հաստատության և ժողովրդի պայծառության համար. Ամեն»:

Հավարտ խոսքի, Հայոց Հայրապետը Էջմիածնի պատկերով փոքրիկ կրծքանշաններ բաժանեց նորընծաներին, որոնք պիտի մշտական հուշարարները լինեն այս սքանչելի օրվա:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԵՐՑՈԳՆԲՈՒՐԳԻ ՕԳՈՍՏԻՆՅԱՆ ՎԱՆՔ

Կեսօրին Վեհափառ Հայրապետն այցելեց Վիեննայից մեկ ժամ հեռավորության վրա գտնվող Հերցոգնբուրգ ավանի Օգոստինյան վանք: Այստեղ Վեհափառ Հայրապետը դիմավորվեց վանականների կողմից՝ վանահայր Մաքսիմիլիան Ֆյուռնպի գլխավորությամբ: Հայոց Հայրապետը թափորով առաջնորդվեց դեպի սուրբ խորան, որի առջև երկրպագությունից հետո տեղի ունեցավ գոհաբանական աղոթք:

Ապա Նորին Սրբությանը շնորհակալության խոսք ուղղեց վանահայր Ֆյուռնպին, որ իր Վիեննա կատարած այս մեծ այցելության մեջ ցանկություն է հայտնել այցելել նաև այս գողտրիկ վանքը, որի վանականների համար մեծ պատիվ է նման հյուր ունենալը:

Ապա ներկաներին իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը, նախ փառք տալով Աստծուն, որ այս առիթը ընծայեց իրեն՝ ժողովական վիճակից և կանոնական հանդիպումներից դուրս, այցելել նաև այսպիսի վանքեր, որտեղ մարդ վերանորոգվում և վերագտնում է ինքն իրեն. «Ես երկար տարիներ եմ ապրել վանական մթնոլորտում և ինձ համար մեծ հաճույք է մշտապես ներկա գտնվել նման հաստատությունների մեջ, որտեղ մարդ ինքնամփոփումով և ինքնաքննումով, կտրված աշխարհի թոհ ու

բոհից, կարողանում է խոսակցել իր Արարչի հետ: Ես ողջունում եմ նաև այն, որ դուք չեք սահմանափակվում ձեր կյանքը միայն վանական այս պարիսպներից ներս անցկացնելու քաջվածությամբ, այլ նաև զբաղված եք հովվական գործունեությամբ՝ գնում եք դեպի մարդկանց հոգիները խոսքով, կյանքով և գործով վկայելու մեր Տիրոջ մասին և ավետարանական ճշմարտությունները: Թող Աստված օրհնի ձեզ, առավել պայծառ պահելով Ս. Օգոստինոսի ուխտի այս վանքը, վերածելով այն առավել կենսունակ ու գործոն Աստծու փառքի և մարդկության բարօրության համար»:

Հավարտ եկեղեցում տեղի ունեցած արարողության և խոսքերի, Վեհափառ Հայրապետը իրեն ընկերակցողների հետ, վանքի սեղանատանը վանականների ճաշի հյուրը եղավ, որից հետո երկար շրջեց վանքի թանգարաններում, դիտելով վանականների ձեռքով պատրաստված արվեստի սքանչելի գործերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Այցելություն «Հովհաննես Շիրազ» հայոց շաբաթօրյա դպրոց

Երեկոյան ժամը 18.30-ին Վեհափառ Հայրապետն այցելեց «Ռադեցկի» դպրոցում գտնվող Հովհաննես Շիրազի անունը կրող հայոց շաբաթօրյա դպրոց՝ ներկա գտնվելու ավարտական վկայականների հանձնման և ամավերջի հանդիսությանը:

Դպրոցի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին տնօրենությունն ու ուսուցչական կազմը՝ տնօրեն Գևորգ Անտոնյանի գլխավորությամբ: Այնուհետև Նորին Սրբությունը աշակերտների, ծնողների, ուսուցիչների և համայնքի անդամների խուռներամ բազմության ուղեկցությամբ բարձրացավ հանդիսությունների դահլիճ:

Ապա դպրոցի երգչախմբի կատարմամբ հնչած «Հայրապետական մաղթանք»-ից հետո, բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ տնօրեն Գևորգ Անտոնյանը, որն իր ուրախությունը հայտնեց Վեհափառ Հայրապետի դպրոց այցելության առիթով, քանի որ Նորին Սրբությունը ներկա է դպրոցի համար մի շատ կարևոր իրադարձության, երբ իրենց աշակերտներից շատերը, ավարտելով ուսումը, պիտի դուրս գան կյանք՝ օտար միջավայր, հայկականությունից հեռու, և փաստորեն պիտի դժվարին «պայքար» մղեն իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար:

Այնուհետև, հրնթացս ծրագրված հայտագրի, ելույթ ունեցավ Ավստրիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Աշոտ Ոսկանյանը: Մեծարգո դեսպանը այս օրը համարեց մեծագույն դասը ոչ միայն դպրոցի պատմության, այլև Ավստրիայի հայոց կյանքում, քանզի «այսօր այստեղ ներկա է Ամենայն Հայոց Հայրապետը, որի կյանքն ու գործը, ազգու խոսքը կենդանի դասագիրք են բոլորիս համար՝ մեծից մինչև փոքրը: Մենք այս քանի օրերին եղանք Վեհափառ Հայրապետի կողքին և տեսանք, թե ինչպիսի մեծ ծավալի և խորքի հասնող ծրագրեր ու գաղափարներ է հայտնում Նորին Սրբությունը:

Երևի բոլորս էլ ենթադրում ենք և գիտենք, որ մեր հայոց

ինքնազգացողությունը երեք մեծագույն անձանց հիման վրա է կերտվել: Գրիգոր Լուսավորիչը, որը բերեց քրիստոնեական հավատքը, Մեսրոպ Մաշտոցը, որը հիմքը դրեց հայոց գիր ու գրականության և Վարդան Մամիկոնյանը, որը պետականության բացակայության պայմաններում այնուամենայնիվ փորձեց պետականություն լինել և սեփական ազգային ուժով պաշտպանել այդ հոգևոր ունեցվածքը:

Այսօր մենք, կրկնում եմ, եզակի հնարավորություն ունենք առաջին անգամ անկախ Հայաստանի պայմաններում ազատորեն ընտրված հոգևոր հովվի ներկայությամբ տոնել ազգային դպրոցի կյանքում տեղի ունեցող այս հանդիսությունը:

Ազգային դպրոցը սփյուռքում մի շատ հատուկ նյութ է, և երբ մենք խոսում ենք սփյուռքի մեր դպրոցների մասին, նախ և առաջ մենք հիշում ենք այն ջանքերը, որ գործադրում են աշխարհով մեկ սփռված մեր համայնքների լավագույն ներկայացուցիչները, որպեսզի հնարավորություն տան վերապրել, պահպանել, վերհիշել այն ողջ հոգևոր հարստությունը, որ ունի մեր ժողովուրդը: Սակայն երբ մենք խոսում ենք հիշելու, վերապրելու, պահպանելու մասին, պատմությունը պահպանելու և չկորցնելու մասին, ես չեմ կարող չհիշատակել ինձ համար չափազանց կարևոր այն խոսքը, որը երեկ Վեհափառ Տերը արտասանեց իր ելույթներից մեկի ժամանակ: Նա խոսում էր պատմության մասին և հատուկ նշեց, որ պատմությունն այն չէ, ինչ որ մենք ուղղակի հիշում ենք, այլ պատմությունն այն է, ինչը որ մենք մեր գործերով իրականություն ենք դարձնում և պիտի դարձնենք: Այսինքն այդ ուղղվածությունն է դեպի առաջ, դեպի ապագան, դեպի գործը, որ մեզ համար այսօր չափազանց կարևոր է, և ես նորից ուզում եմ մեջ բերել նույն ելույթը, որ մենք չպետք է դառնանք պատմության դերի, այլ մենք պետք է ուղղվենք դեպի մեր ժողովրդի ապագան:

Այս հարցը մենք դրել ենք մեր պետականության հիմքում և այսօր մենք ունենք նորոգվող պետություն, նորոգվող եկեղեցի և նորոգվող սփյուռք: Եվ երևի այս երեքը պետք է մի ամբողջություն դառնան, որպեսզի մենք իսկապես վստահ լիներենք, որ մեր ժողովրդի ապագան պայծառ է լինելու:

Ես ուզում եմ նաև հիշել այսօրվա չափազանց հետաքրքրական և կարևոր այն արարողությունը, որ տեղի ունեցավ Ս. Ստեփաննոսի տաճարում, որտեղ Վիեննայի արքեպիսկոպոս Շյոնբյոռնը, կարծես թե այդ նույն գաղափարը կրկնելով և շարունակելով, հատուկ կերպով նշեց, որ մենք պետք է խոսենք ավանդության մասին, հիշենք և պահենք ավանդությունը, բայց ավանդությունը պետք է լինի ոչ թե մանր-մունր սովորությունները, որոնք կարող են և փոխվել, այլ պետք է լինի ավանդությունը բառիս լայն իմաստով, հոգևոր այն մեծ ավանդությունը, որը պետք է պահպանենք: Պիտի նորոգվենք փոքր գործերի մեջ, որպեսզի մեծ գործերը առաջ տանենք և պահպանենք: Եվ ես շատ ուրախ եմ, որ մեր հոգևոր առաջնորդի և աշխարհի նշանավոր մարդկանց կարծիքների նույնությունը կա, որովհետև այսօր մեզ համար չափազանց կարևոր է բացվել աշխարհի առջև, և դրա միջոցներից մեկը իհարկե նաև մեր կրթությունն է:

Ես ուզում եմ մաղթել, որ այս փոքրիկ օջախը դառնա աշխարհի առաջ բացվելու, առաջ գնալու, ազգայինը և համազգայինը միավորելու մի օջախ և որպեսզի մենք սկսենք մի շարժում, որ սփյուռքն ու Հայրենիքը իսկապես վերջնականորեն միավորվեն մեկ ազգային նպատակի մեջ: Եվ ես կարծում

եմ, որ Վեհափառ Տիրոջ ներկայությունն այստեղ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի, որի իշխանությունը տարածվում է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում սփռված մեր հայության վրա, հենց այդ խորհրդանիշն է, որը թույլ է տալիս ասել, որ այդ ապագան մեզ սպասում է: Շնորհակալություն»:

Հարգարժան դեսպանի խոսքից հետո, դպրոցի պարախմբերն ու երգչախումբը շարունակեցին իրենց տոնական ծրագիրը, որի ավարտին ողջույնի և բարիգալստյան խոսքով հանդես եկավ Առաջնորդ Մեսրոպ արք. Գրիգորյանը: Սրբական Հայրը իր անսահման երջանկությունը հայտնեց, որ շուրջ երեսուն տարիների ընդմիջումից հետո դարձյալ Ամենայն Հայոց Հայրապետը իր շնորհաբեր այցելությունն է բերել ավստրիահայոց երեք հազարի հասնող փոքրիկ համայնքին: Ապա Սրբական Հայրը մեկ առ մեկ ներայացրեց համայնքի կյանքում գործող բոլոր կազմակերպություններն ու կառույցները, որոնք իրենց գործունեությամբ փորձում են միշտ աշխույժ պահել Հայրենիքից հեռու ապրող հայության կյանքը: Վերջում Առաջնորդ Սրբականը, կրկին անգամ շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով Վեհափառ Հայրապետին, Նորին Սրբությանը հրավիրեց իր հայրական խոսքն ուղղելու և՛ աշակերտությանը, և՛ ամբողջ համայնքին:

Հայոց Հայրապետը նախ փառք և գոհություն հայտնեց Աստծուն, որ օտար մի հողի վրա ևս մեկ անգամ առիթն է ունենում տեսնելու և լսելու հայ դպրոցից սնունդ ստացող հայ մանուկների կարկաչուն ձայնը, որ նշանակում է, թե «հայ կյանքը չի կարող մարել, որքան էլ այն հեռու լինի Մայր Հողից, քանի կան այսպիսի դպրոցներ՝ հայ մշակույթի թոնրատներ»: Ապա ընդհանուր գծերով Նորին Սրբությունը խոսեց դպրոցի և Եկեղեցու մեծագույն դերի մասին հայ ժողովրդի կյանքում: Մանավանդ «օտար երկրներում և օտար մշակույթի պայմաններում, երբ ձուլվելու և այլ մշակույթներով տարվելու ամենօրյա պայքար է, առավել մեծ նշանակություն են ստանում այս երկու մեծ սրբությունները՝ մեր ազգակերտման և հայակերտման այս վսեմ ժուլարանները: Եվ ահա սա՛ է Մեսրոպ Մաշտոցի մեծագույն սիրանքը, որ որանից 1500 տարիներ առաջ կատարած իր Աստվածապարգև գյուտով, այսօր և՛ապրում է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի չորս ծագերում, որտեղ հայ անունը կա: Եվ որքան սքանչելի էր, երբ մի քանի օրեր առաջ բազմաթիվ հայորդիներ Հայաստանի տարբեր շրջաններից ոտքով ուխտի եկան Օշական՝ որտեղ թաղված է Սուրբ Մեսրոպը, և իրենց երախտագիտությունն ու հարգանքն ընծայեցին և հայցեցին նրա բարեխոսությունը: Դրանով Մեսրոպ Մաշտոցը չէր, որ մեծացավ կամ փառավորվեց, այլ նրանք, ովքեր այդպես հարգել գիտեն իրենց երախտավորներին: Դուք էլ այսօր, սիրելիներ, ձեր հայերենի լավ իմացությամբ, մշակույթի և գրականության ուսուցումով, Եկեղեցուն նվիրումով, Հայրենիքի սիրով ապրելով դուք է, որ բարձրանում եք, հարազատանում եք ձեր հայրերի հայկական և քրիստոնեական նկարագրի հետ: Ապրե՛ք բոլորդ և Վիեննայում եղած այս փոքրիկ օազիսը անընդհատ ջրառատ պահեցեք ձեր հաճախումով և ուսումով: Աստված թող օրհնի ձեզ բոլորիդ. ամեն»:

Պաշտոնական ընթրիք վարչության կողմից

Երեկոյան ժամը 20.30-ին, Ավստրիո հայոց վարչության կողմից, Վիեննայի շքեղ հյուրանոցներից «Hotel de France»-ում կազմակերպվել էր մեծ ընդունելություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ընդունելությանը ներկա էին հետևյալ դեսպան պրն. Աշոտ Ոսկանյանը, խորհրդական Սամվել Մկրտչյանը, վարչության անդամները և հայ համայնքի 100-ից ավելի հրավիրյալներ:

Ճաշկերույթի ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ առաջնորդ Մեսրոպ արք. Գրիգորյանը, որը ամբողջ գաղութի անունից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին այս այցելության առիթով, ապա ներկայացրեց Նորին Սրբության Գրացի ժողովին թողած ազդեցության և տպավորության մասին, որի արձագանքները տեղ են գտել ոչ միայն տեղական, այլև հարևան մյուս երկների լրատվական ծառայություններում. «Սա մեծ պատիվ է մասնավորապես Ավստրիո Հայության և ընդհանրապես ողջ Հայության համար, քանզի Վեհափառ Հայրապետը իր բանախոսությամբ ամենաբարձր կերպով ներկայացրեց Հայ Եկեղեցին և ժողովուրդը»:

Պաշտոնական ճաշկերույթի ավարտին, ներկաներին իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց այս ջերմ ընդունելության համար: Ապա շարունակելով իր խոսքը Հայոց Հայրապետն ինչպես ամենուր, այստեղ ևս առանձնակի ուժգնությամբ շեշտեց այսօրվա հրամայականը՝ տեր կանգնել անկախացած սեփական Հայրենիքին և այդ անկախության ու ապատության հովանու ներքո ապատորեն գործող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին. «Կյանքը կյանք չէ առանց փոփոխության: Առանց փոփոխության կյանք չկա. ուզենք կամ չուզենք փոփոխություն պիտի լինի: Բայց երբ մենք դերակատար կլինենք այդ փոփոխության մեջ, այդ ժամանակ է, որ փոփոխությունը մեզ համար իմաստ կստանա, այլապես մենք զոհը կդառնանք փոփոխություններին: Այսօր աշխարհը կփոխվի, շատ արագ կփոխվի, և արագությունն այնքան սրընթաց է, որ մարդկային միտքը չի կարողանում մարսել այդ բոլոր արագությունները:

Դարեր շարունակ մենք օտարի կամքով շարժած ենք: Մեր կշռույթը, մեր գնացքը օտարները ճշտած են: Եվ այդ բազում դարերի մշուշոտ օրերից հետո այնպես դասավորվեցին դեպքերը, որ մենք վերստին տիրացանք մեր անկախությանն ու ազատությանը: Սովորական դեպք չէր սա, այլ շրջափոխիչ, որովհետև դարերի երազանքն էր այն: Մենք այսօր բախտավորներ ենք, որովհետև շատերը մեզ այդ գաղափարը, երազն ու տեսիլքը տվեցին, բայց իրենք չտեսան այսօրը:

Սիրելի բարեկամներ, փոփոխությունը պատահեց, բայց անհրաժեշտ է այսօր, որ ազգը ինքը փոխվի: Այս փոփոխությանն համապատասխան հոգևոր, ազգային, բարոյական փոփոխություն առաջանա: Ամեն մարդ մտածում է աշխարհը փոխելու մասին, բայց ոչ ոք է մտածում ինքն իրեն փոխելու մասին: Ասում ենք՝ աշխարհը պիտի փոխվի, բայց եթե մենք չփոխվենք, աշխարհի փոփոխությունը ինչպես կարող ենք յուրացնել: Անկախություն ունենալը ուրախություն է պատճառում, բայց անկախություն պահելը, երկիրը շենացնելը այնքան էլ դյուրին գործ չէ:

Այսօր Հայաստանն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Հայի պատասխանատվությունն են: Նրանց մի բան պատահելու դեպքում ոչ ոքին մեղադրելու իրավունք չունենք, այլ մենք զմեզ: Հետևաբար, բոլորս միասին, դուք այստեղ՝ Ավստրիայում, և Հայության մյուս զանգվածներն էլ աշխարհի տարբեր ծագերում, պարզապես պարտավոր ենք գործելու մեկ սիրտ, մեկ կամք և մեկ առաքելություն ունենալով: Դեռ բազում դժվարություններ ունենք հաղթահարելու՝ չփախչե՞նք դրանցից, որովհետև լավ կամ վատ՝ դրանք մերն են: Այլ ձեռք տանք միմյանց և գործենք միահամուռ կերպով, առանց մանր ու փցուն հաշիվների, մշտապես ունենալով գերագույն շահի գաղափարը՝ այսինքն Եկեղեցի, Հայրենիք, Ազգ: Եվ ես մաղթում եմ, որ դուք ապրեք այդ գերագույն շահով Աստուծո փառքի, մեր Եկեղեցու պայծառության, Հայրենիքի շենացման և ազգային բոլոր հավաքական գաղափարների տեսիլքների ու երազների իրականացման նախանձախնդրությամբ: Եվ Աստված թող զորավիգ լինի ձեզ՝ երբեք տեղի չտալու և նահանջ չապրելու համար: Ամեն»:

Խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը, ի նշան գնահատանքի և իր հայրապետական հոգածության ու ուշադրության, Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց Ավստրիահայ բարերար պրն. Վլադիմիր Հարությունյանին՝ վերջինիս եկեղեցաշեն և ազգանվեր գործունեության համար (տե՛ս էջ 133) :

Ապա Նորին Սրբությունը, բարձր գնահատելով Ավստրիայի հայոց վարչության անդամների ծավալած աշխատանքները, նրանց բոլորին նվիրեց «ԳԱՐԵԳԻՆ Ա» և «Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՍՐՍՐԱՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ» մակագրություններով, երկկողմ քանդակներով բրոնզյա հուշամեդալներ:

ՀՈՒՆԻՍ 29, ԿԻՐԱԿԻ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՀԱՅՈՑ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը մասնակցեց Հայոց գեղեցկատես Ս. Հռիփսիմե եկեղեցում մատուցվող Սուրբ և անմահ Պատարագին: Պատարագիչն էր Ավստրիայի հայոց Առաջնորդ Մեսրոպ արք. Գրիգորյանը: Պատարագին ներկա էին Ղպտի, Ասորի, Կաթոլիկ, Բուլղար, Լութերական, Անգլիկան Եկեղեցիների ներկայացուցիչները, Վիեննայի մխիթարյանների հայրերի աբբահայրը, << դեսպանատան աշխատակիցները՝ դեսպանի գլխավորությամբ, «Pro Oriente»-ի պատասխանատուները, Ավստրիայում հավատարմագրված օտարերկրյա դեսպաններ, պետական բարձրաստիճան այրեր և բազմաթիվ հայ հավատացյալներ:

Հընթացս Ս. Պատարագի ողջույնի խոսքով հանդես եկավ պատարագիչ Սրբազանը, որը գերմաներեն և հայերեն լեզուներով ներկաներին ևս մեկ անգամ ծանոթացրեց Վեհափառ Հայրապետի կենսագրական գծերին և Ավստրիա կատարած այցելության մանրամասներին: Այնուհետև Սրբազան Հայրը հրավիրեց Նորին Սրբությանը՝ իր հայրական պատգամը տալու ներկաներին և հայ հավատացյալ կավակներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ՀՌԻՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Սիրելի սրբազան, հարգարժան հյուրեր և թանկագին հավատացյալներ՝ հավատարիմ հայորդիք, որ կապրիք Ավստրիո մեջ, հատկապես ի Վիեննա, Սուրբ Հռիփսիմե եկեղեցու օրհնության և հոգևոր հովանավորության ներքո:

Առաջին խոսքս, այս Սուրբ Պատարագին, այս սրբազան բեմեն դեպի երկինք է ուղղված՝ Աստուծո կուղղեմ խոսքս ասելով. «Փառք Քեզ, Աստուած, փա՛ռք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փա՛ռք Քեզ»:

Փառք Քեզ, որ ինձ տվեցիր այս գեղցկագույն հոգևոր պահերից մեկը, որ ես աղոթակից լինեմ իմ ժողովրդի հետ միասին այս եկեղեցու մեջ, որ կառուցվել է մեր քրիստոնեության դարձի ամենակարևոր մեկ դեմքերից Սուրբ Հռիփսիմեի անունով:

Աշխարհի բազմաթիվ երկրներում ես աղոթակից եմ դարձել իմ ժողովրդի զավակների հետ, բայց առաջին անգամն է իմ 45 տարիների հոգևորականի կյանքում, որ ես գտնվում եմ այս տաճարի մեջ և, ձեր սրտերից ու հոգիներից բխած ձեր աղոթքին խառնելով իմ աղոթքը, փառք եմ տալիս Աստծուն, որ այսպիսի եկեղեցի տվեց մեր ժողովրդին, որ դիտե եկեղեցին այսպես արժեցնել, լեցվել և լեցվիլ եկեղեցիով:

Ես ցանկանում եմ նաև հարգանք ընծայել այն անձին, որ բարերարը եղավ այս եկեղեցու հիմնադրության, որին ես ճանաչել եմ իմ ուսանողության օրերից՝ Անգլիայում, տիկ. Ռոզ Թրիքի: Ես նրան տեսել եմ Լոնդոնի եկեղեցում, և նրա բարերարությունը մեծ նշանակություն ունեցավ մեր երջանկահիշատակ նախորդի՝ Վազգեն Ա Կաթողիկոսի օրոք, և այսօր այդ եկեղեցու մեջ մենք հոգևոր ապրումների մի հոսանք ենք ապրում՝ կարողանալով Աստուծո հետ հաղորդության գալ և իրար հետ եղբայրական ապրումներով զորանալ այս եկեղեցու միջոցով:

Նաև շնորհակալություն եմ ուզում հայտնել Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանին և այս գաղութի աղգային-եկեղեցական վարչության, որ Մեր այս այցելության առիթով էկումենական այդ մեծ ժողովին, Մեզ հրավիրեցին և առիթ տվեցին անդրանիկ հովվապետական այցելություն տալու Մեր սիրեցյալ ժողովրդին:

Սպա Վեհափառ Հայրապետը իր խոսքը շարունակեց անգլերենով, շնորհակալություն հայտնելով բոլոր հյուրերին այս սուրբ պատարագին իրենց մասնակցությունը բերելու և աղոթական հաղորդության մեջ գտնվելու համար:

«ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ»

«Ես եմ հացն կենաց»

Այսպես խոսեց մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Եվ քիչ առաջ այս սրբազան բեմեն ավետարանից կարդացվեց այն հատվածը, որտեղ նկարագրվում էր, թե ինչպես Հիսուս երկու նկանակ հացով և հինգ ձկով կարողացավ կերակրել հինգ հազար հոգիների: Ավետարանը պատմում է, որ երբ Հիսուս

հավաքել էր աշակերտներին և հսկա բազմություն էր ժողովվել Իր շուրջը և քարոզում էր, հանկարծ օրը երեկոյացավ և մարդիկ ուտելիք չունեին : Եվ աշակերտները մոտենալով ասացին, որ արդեն երեկո է, իսկ մարդիկ անոթի, թող ողջ ժողովուրդը գնա և ուտելու բան գնի իր համար: Հիսուս վերցրեց իրենց մոտ եղած երկու նկանակն ու հինգ ձուկը, օրհնեց և բաշխեց, որով հինգ հազար հոգիներ կերակրվեցին և տասներեք կողով էլ ավելացավ:

Ավետարանի այս պատգամի լույսի տակ, ես ուզում եմ ձեր ուշադրությունը և մտասևեռումը կենտրոնացնել հացի գաղափարի վրա: Շատերն ասել են, որ մարդու ամբողջ կյանքը վազք է հացի ետևից: Հացը, որ ամեն օր ուտում ենք, չենք անդրադառնում, թե որքան կարևոր է մեր կյանքում: Հարցրեք մեկին, որ անոթի է, թե ինչ է ուզում նա՝ ո՛չ ոսկի և ո՛չ էլ արծաթ, այլ մի պատառ հաց: Առանց հացի չկա ֆիզիկական կյանք: Այնքան ժամանակ, որ շնչում և ապրում ենք, հացը մեզ համար կենսական նշանակություն ունի: Առանց հացի չենք կարող ապրել, բայց մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս է նաև ասել, որ մարդը միա՛յն հացով չի կարող ապրել: Առանց հացի չի կարող ապրել, բայց նույնքան ճիշտ է, որ միայն հացով մարդկային կյանք չկա: Եվ երբ Հիսուս ասաց, որ «Ես եմ կյանքի հացը», ի՞նչ ուզեց փոխանցել ժողովրդին ու աշխարհին: Ես չորս տեսակ հացեր եմ տարբերակում՝ ֆիզիկական, իմացական, ընկերային և հոգևոր: Ժամանակ եղավ, որ մեր ժողովուրդը ֆիզիկական հաց չունեցավ, և շատերը հացի պակասից մեռան: Սովը սարսափելի բան է, որի համար մարդիկ ամենազզրելի արարքների են դիմել: Այսօր հացի պակաս չունենք՝ փառք Աստուծո: Ինչպես ես հաճախ եմ ասել, մենք այսօր տառապում ենք հացի առատությունից և ոչ թե չգոյությունից: Հռոմեական հզոր կայսրությունն ընկավ, որովհետև հռոմեացի զինվորները իրենք իրենց հանձնել էին խնջույքների և ուտել խմելու և այդ պատճառով էլ կորցրին իրենց կայսրությունը: Բայց մենք միայն հացով չենք կարող ապրել:

Ձեր «Հովհաննես Շիրազ» դպրոցը, որ ես տեսա երեկ, դա ուրիշ մի փուռ է՝ իմացական հացի փուռ: Գիտությունը, հմտությունը, իմաստությունն են, որ մարդուն ընտրանքի կարելիություն են տալիս: Հետևաբար, երկրորդ հացը մտքի հացն է, որ մեր կյանքին իմաստ կտա, արժեքները չափելու, կշռելու և դրանցից լավագույնը, վեհը ընտրելու:

Երրորդը՝ ընկերային հացն է՝ միասին ապրել կարողանալու սնունդը: Ասվել է, որ «մարդ էակը ընկերային էակ է», որը նշանավոր փիլիսոփա Արիստոտելի խոսքն է: Եթե ուզում եք մարդուն չարչարել, ոչ մի հարված մի տվեք նրան, այլ առանձնացրեք մի սենյակում, որ ոչ մեկի հետ հարաբերություն չունենա: Առանձնությունը ամենամեծ դժոխքն է: Զզվալ ուրիշի ներկայությունը քո մեջ, չլինել ուրիշի հետ, համայնությունը չզգալ՝ այդ ժամանակ քո անձի բանտարկյալը կլինես: Ներդաշնակորեն ապրելը ընկերային հաց է և նրա մեջ է մեր երջանկությունը:

Չորրորդը՝ հոգևոր հացն է և հիմա աշխարհում ամենակարևորը այս հոգևոր հացն է: Գրացի ժողովը, որ տեղի ունեցավ, աշխարհում կրոնական վերազարթոնքի նշաններից մեկն է: Ներկայումս ամբողջ աշխարհում և բոլոր կրոնների մեջ մի նոր վերազարթոնք կա: Մարդիկ անդրադառնում են և հարց տալիս. ո՞վ եմ ես առանց իմ Ստեղծիչի: Մարդը կարողություն ունի, բայց այդ կարողությունը իրեն տրվել է Աստուծո կողմից: Եվ եթե այդ կարողությամբ ինքն իրեն Աստված նկատի, այն ժամանակ է, որ կընկնի:

Մենք աշխարհի և կյանքի տերը չենք, այլ տնտեսները: Այսօր այդ կրոնական գաղթոնքն է, որ տեսնվում է և՛ մեր Մայր Հայրենիքի, և՛ նախկին Խորհրդային Միությունից դուրս եկող երկրների մեջ, և՛ Եվրոպայում, և՛ Ամերիկայում: Նոր վերարթնություն կա ամբողջ աշխարհում, որովհետև մարդիկ զգում են, որ նյութական, իմացական հաց ունենալով հանդերձ, առանց ընկերային և հոգևոր հացի՝ Աստծուց եկած հոգևոր ներշնչման և մեր առ Աստված ունեցած երախտագիտության զգացումի, մենք կդառնանք բռնապետներ:

Այսօր ես եկել եմ ձեզ այս հոգևոր հացից մի բաղաբջ բերելու: Նրանք, ովքեր եղել և ճանաչում են Էջմիածինը, անպայման պիտի անդրադառնան, որ 1700 տարիներից ի վեր հավատքի հացն է բաշխվում՝ Լուսավորչի լույս հավատքի հետ միասին, մեր ողջ հայությանը: Ես ցանկանում եմ, որ այստեղ՝ Ավստրիայում, Էջմիածնի մանրանկարն ու ճառագայթը եղող Սուրբ Հռիփսիմեի այս տաճարից չունչ առնեք, լույս առնեք, հոգևոր հաց առնեք: Աշխարհում չկա մեկ հայ եկեղեցի, որի մեջ Էջմիածինը ներկա չլինի: Էջմիածինը արևն է և մեր եկեղեցիները՝ ճառագայթները: Աշխարհի չորս ծագերում գտնվող մեր եկեղեցիները արևից ճառագայթած շառավիղներ են և արևի լույսը ունեն իրենց մեջ: Այդ լույսը պետք ունենք բոլորս էլ այս տան մեջ: Աստված ձեր բոլոր գործերին և ընտանիքներին հաջողություն տա, բայց մի մոռացեք ձեր մեծ ընտանիքը:

Սիրելիներ, Աստված է մեզ տվել, ինչ որ մենք ունենք, և ինչը որ մեր ձեռքով ենք ձեռք բերել, Աստուծո տվածի միջոցով ենք ձեռք բերել: Եթե Աստված մեզ բանականություն, առողջություն, ժամանակ և կարողություն չտար, մենք որտեղից պիտի կարողանայինք մեր անձնական հաջողություն-ները ունենալ: Այս բարիքները Աստծուց են: Նա, ով չի կարողանա այս բարիքին բարիքով պատասխանել, սիրույն սիրով պատասխանել, նա ճշմարտորեն մարդ չէ և հայ: Ինչ որ Աստված պիտի պահանջի մի օր՝ Իր տվածը չէ, այլ Իր տվածից ձեր ձեռք բերածը, որ Աստուն, ազգին, Եկեղեցուն կընծայեք, և դրանով է, որ կմեծանաք: Ա՛յս է կյանքի ճշմարտությունը: Դուք այստեղ եք, Ավստրիո մեջ կապրիք, այս բարգավաճ ու խաղաղ երկրի մեջ, և ես կցանկանամ, որ ձեր կյանքը լինի այս չորս տարածքներով՝ ֆիզիկական, իմացական, ընկերային և հոգևոր մի լեցուն, երջանիկ կյանք և կարողանաք ձեր կյանքը բաշխել նաև ձեր եղբայրա-կիցներին, որտեղ էլ որ նրանք կարիքը ունենան, որովհետև նրանով է, որ պիտի մեծանաք, քանզի քո երջանկությունը մեկն է, իսկ ուրիշին տալով՝ կրկնապատիկ, որովհետև նրա երջանկությունը կավելանա քո երջանկու-թյան վրա: Այս է մեր քրիստոնեական հավատքի դասը: Եվ այսօր մեր նոր Հայաստանի, նոր Հանրապետության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ մենք սկսել ենք մի նոր կյանք. եկե՛ք ձեռք-ձեռքի տանք և ամեն բանից վեր նկատենք Աստուծո փառքը, մեր ազգի պատիվը, մեր Հայրենիքի հզորությունը, մեր Եկեղեցու բարգավաճումը:

Ահավասիկ այս մտածումներն էին, որ ես ուզեցի բաժանել ձեզ հետ այս առաջին քարոզով Սուրբ Հռիփսիմե տաճարում»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը անգլերենով քարոզի հիմնական միտքը ավելի սեղմ գծերով խոսեց ներկա հյուրերի համար, ապա շարունակեց՝ ասելով.

«Կցանկանայի, որ իմ խոսքի ավարտին, իբրև կնիք, այս սկիհը նվիրել Սուրբ Հռիփսիմե եկեղեցուն՝ սիրելի սրբազանին, և սա այդ հոգևոր հացի մատակարարման աղբյուր թող լինի: Եվ երբ այնտեղից հաղորդվեք Քրիստոսի մարմնի ու արյան հետ, զգացեք նաև Սուրբ Էջմիածնի հավատքը և Հայրենիքի սերը. Ամեն»:

Հավարտ սրբական պատարագի, եկեղեցու կողքի սրահում, ի ներկայության բազմաթիվ հավատացյալների, Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» երկրորդ կարգի շքանշանով պարգևատրեց Ավստրիո հայոց վարչության ատենապետ Սրմեն Ութուճյանին՝ բարձր գնահատելով նրա ազգային անսակարկ գործունեությունը (տե՛ս էջ 134):

Վերջում տեղի ունեցավ աջահամբույր:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՔԼՈՍԹՐՆՈՅԲՈՒՐԳԻ Ս. ԼԵՈՊՈԼԴ ՎԱՆՔ

Կեսօրից հետո, ժամը 16.00-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Վիեննայից հարավ գտնվող, Ստորին Ավստրիո մարզի Քլոսթրնոյբուրգի Ս. Լեոպոլդ վանք: Այստեղ Հայոց Հայրապետին, վանահոր և Ստորին Ավստրիո մարզպետ Էրվին Փրեոլի գլխավորությամբ, դիմավորեցին վանականներն ու աշխարհիկ պատասխանատուները, որոնք Վեհափառ Հայրապետին ծանոթացրեցին վանքի պատմությանը: Նշենք, որ ԺԶ դարում այս վանքի մոտ և վանականների վճռական մասնակցությամբ է կասեցվել ու վերջնական հարված տրվել թուրքական ներխուժմանը ի Վիեննա: Փաստորեն այս վանքի մոտ է վճռվել Եվրոպայի բախտը և ձեռք բերվել ապատությունը:

Ս. Լեոպոլդ տաճարում տեղի ունեցավ գոհաբանական մաղթանք՝ Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, հավարտ որի բարիգալստյան և ողջույնի խոսքով հանդես եկավ աբբահայրը, ապա հրավիրեց Հայոց Հայրապետին իր խոսքն ուղղելու ներկաներին:

Նորին Սրբությունը փառք և գոհություն հայտնեց Աստծուն, որ գտնվում է այսպիսի մի պատմական նշանակություն ունեցող վանքում և ընդհանրապես տարածքում, որտեղ մի ամբողջ ժողովրդի և, ինչու չէ՝ նաև քաղաքակրթության բախտն է որոշվել. «Այս վայրը ձեզ համար ունի այն նշանակությունը, ինչ մեզ համար Ավարայրն ու Սարդարապատը»: Ապա, անդրադառնալով վանականության դերին ու նշանակությանը Եկեղեցու կյանքում, Հայոց Հայրապետը անդրադարձավ սույն վանքի վանականներին՝ գնահատելով նաև նրանց ծավալած հասարակական գործունեությունը: Վերջում Վեհափառ Հայրապետը, օրհնելով ներկաներին և շնորհակալություն հայտնելով, որ առիթ ընձեռնվեց այս էլ երկրորդ անգամ վանական միջավայր այցելելու իր հովվապետական շրջագայության ընթացքում, իր խոսքը եզրափակեց՝ ասելով. «Ես այսպիսի վանքերի մեջ կլսեմ ոչ միայն այսօրվա աղոթքի և երգերի ձայնը, այլև դարերի: Ես գալիս եմ մի այնպիսի երկրից՝ Հայաստանից, որտեղ բազմաթիվ վանքեր կան, որոնք թեև այսքան ճոխ և չքեղ չեն, բայց իրենց գողտրիկ վիճակով ներշնչող հոգևոր մթնոլորտի վկաներն են: Ես օրհնում եմ ձեզ և աղոթում, որ Աստված առավել ուժ և կարողություն տա ձեզ Իր փառքի և մարդկության բարօրության ծառայության մեջ»:

Եկեղեցում տեղի ունեցած աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետը վանքի սեղանատանը հյուրը եղավ Ստորին Ավստրիո մարզպետ Էրվին Փրեոլի:

ՀՈՒՆԻՍ 30, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Երկուշաբթի առավոտյան ժամը 10.00-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Վիեննայում գտնվող << դեսպանատուն: Դեսպանատան շենքի մուտքին Հայոց Հայրապետին դիմավորեցին դեսպան Աշոտ Ոսկանյանը, խորհրդական Սամվել Մկրտչյանը և Նորին Սրբությանն առաջնորդեցին հայոց դեսպանությանն հատկացված հարկաբաժին:

Վեհափառ Հայրապետը նախ Տնօրինեքի կարգ կատարեց այստեղ, ապա, իր խոսքն ուղղելով դեսպանության աշխատակիցներին, իր ուրախությունը հայտնեց, որ այսօր գրեթե բոլոր երկրներում հայկական եկեղեցիներից բացի գոյություն ունեն նաև անկախ Հայրենիքի դեսպանատները՝ «որպես մի փոքրիկ հողատարածություն Հայաստան երկրից: Սա մեր բոլորի տունն է՝ փոքրիկ Հայաստանը, հետևաբար աշխույժ և գործուն պահենք այս տունը:

Որքան երջանիկ եմ ես, որ այս առավոտ իմ աչքերը արևին բացելով այցելեցի Անկախ Հայաստանի Հանրապետության դեսպանատուն, որտեղ իմ մեջ յուրատեսակ ապրումներ և զգացումներ են արթնանում՝ արժանապատվության զգացում, որ ես մի ազգի զավակն ու Հովվապետն եմ, որ արժանի կերպով քայլում է մյուս ազգերի շարքում՝ իր դիմագիծ եռագույնով:

Հայոց այս տունը, իմ մտածումով, կոչված է երկու բան մեկնաբանելու՝ աշխարհին ներկայացնել Հայաստանը և ազգերի մեջ եղած, այս պարագային՝ Եվրոպական քաղաքակրթությունը, մշակույթը փոխանցել Հայաստան:

Ես աղոթում եմ Աստծուն, որ միշտ հովանի և ապավեն լինի բոլորիդ, որպեսզի կարողանաք եռանգուն գործունեությամբ արժանավայել կերպով ներկայացնել մեր Ազատ ու Անկախ Հայրենիքը՝ Մայր Հայաստանը»:

Այնուհետև մեծարգո դեսպան Աշոտ Ոսկանյանն իր երախտագիտությունը հայտնեց Հայոց Հայրապետին այս պատվաբեր այցելության և տան օրհնության համար, վստահեցնելով, որ այդ հայրական օրհնությունը առավել թափ պիտի հաղորդի և նպատակասլաց դարձնի դեսպանատան գործունեությունը: Ապա հարգարժան դեսպանը Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց դեսպանատան աշխատակիցներին և ծավալած աշխատանքներին, որոնք, իր բնութագրմամբ, չափազանց լարված են և տնական գործունեություն են պահանջում մի քանի ուղղություններով:

Վերջում տրված հյուրասիրության ընթացքում Նորին Սրբությունն ու դեսպանության աշխատակիցները կիսեցին իրենց մտածումներն ու խոհերը դեսպանության աշխատանքների և դրանց կարգացման վերաբերյալ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց դեսպանատուն այցելությունից հետո, ժամը 11.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց Ավստրիայի Կրթական նախարարությունն՝ ուղեկցությամբ Մեսրոպ սրբազանի և «Pro Oriente»-ի ներկայացուցիչներ պր.պր. Յոնակի և Շտիրնեմանի:

Նախարարության շենքի մուտքին դիմավորվելուց հետո, Նորին Սրբությունն առաջնորդվեց Մշակույթի նախարար տիկ. Էլիսաբեթ Գերբերի աշխատասենյակ, որտեղ աշխույժ երկխոսություն ծավալվեց: Տիկ. Գերբերը պատրաստակամություն հայտնեց նաև իր ունեցած միջոցներով օժանդակել և նպաստել Մայր Աթոռի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Մշակույթի նախարարության գործունեությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ այս նախնական խոսակցությունը ապագայում առավել գործնական բնույթ կկրի, և երկու երկրների այս նախարարությունները սերտ համագործակցությամբ պիտի նպաստեն մշակույթի առավել կարգացմանը:

ԱՅՑ ԵՎ ԸՆԹՐԻՔ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՆՔՈՒՄ

Երեկոյան ժամը 18.00-ին Հայոց Հայրապետն այցելեց անցյալ դարասկզբին Վիեննայում հաստատված Մխիթարյան միաբանությանը: Մայր եկեղեցու մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հռոմից՝ այստեղ ժամանած Կաթոլիկ Հայերի Կաթողիկոս-Պատրիարք Հովհաննես-Պետրոս ԺԸ Գասպարյանը, նրան ուղեկցող Վարդան եպիսկոպոսը, Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Պողոս վրդ. Կոջոյանը, միաբանության անդամներ և հայ հավատացյալներ: «Հրաշափառ»-ով տաճար մուտք գործելուց հետո, Նորին Սրբությունն առաջնորդվեց Մխիթարյան վանք, ուր տեղի ունեցավ ընդունելություն և հյուրասիրություն:

Միաբանության աբբահայր Պողոս վարդապետը, մեծ պատիվ համարելով Վեհափառ Հայրապետի ներկայությունն աբբահայրության մեջ, շնորհակալություն հայտնեց այս հայրական այցելության համար:

Աբբահոր խոսքից հետո Նորին Սրբությունն իր պատգամը տվեց ներկաներին.

«Սիրելի Գասպարյան Կաթողիկոս-Պատրիարք Հայ Կաթողիկե Համայնքի, սիրելի աբբահայր, շատ սիրելի միաբան եղբայրներ և սիրելի ժողովուրդ հայոց,

Մեծ ուրախություն է ինձ համար մի անգամ ևս գտնվիլ այս տան մեջ: Այս տունը շենք լինելուց առաջ, ինձ համար հոգիի մի հոսանք է: Բացում էինք Տաշյանների, Ակինյանների և այլոց դրքերը և արձանագրված էր Վիեննա: Մեզ համար հայ մշակույթի, արվեստի, գրականության, կրոնական, աստվածաբանական, ծիսագիտական, կանոնագիտական և այլ մարզերի մեջ ուսումնասիրության ամենաբեղմնալից կենտրոններից մեկն է եղել Մխիթարյան միաբանությունը թե՛ Վենետիկի մեջ և թե՛ Վիեննայի մեջ: Ես անցյալ դեկտեմբերին այցելեցի Վենետիկ և այսօր ուրախ եմ, որ վեց ամիս հետո գտնվում եմ Վիեննայի միաբանության այս ծոցի մեջ: Եվ այլևս

ՄԻՆԻՄՈՒՆԴՈՒՍՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊԵՏՐՈՍ ԺԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ-
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌԱԳՐԱՏԱՆԸ

«Վիեննա» բառը ինձ համար դրքի մեջ երևացող, պատմության մեջ միայն արտահայտված բառ չէ, այլ կենդանի, գործող հաստատություն է փոքրաթիվ, բայց սրտանց նվիրյալների, որոնք պահում են Մխիթար արքահոր ժառանգը: Իրապես մի նվիրական ժառանգ, որ ամբողջ հայությանն է պատկանում, և իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս ես ցանկանում եմ սա գնահատել: Կուզեմ այստեղ հիշեցնել մեկ բան, որ ավելի քան 105 տարի առաջ այստեղով անցավ իմ երջանկահիշատակ նախորդներից Խրիմյան Հայրիկը, որ կաթողիկոս ընտրվելուց հետո Երուսաղեմից գնում էր Էջմիածին, և ճանապարհին կանգ առավ Վիեննայում: Եվ այդ ժամանակ Մխիթարյան հայրերից մեկը բարիգալստյան խոսք ասաց, որին պատասխանելով Խրիմյան Հայրիկը իրեն հատուկ հանկարծախոսությամբ պատասխանեց՝ ասելով. «Ինչ կուզեք, եղեք, դուք իմ զավակներն եք»: Մեկ գար ի վեր այդ խոսքերը երբեք չեն հնացել՝ թարմ են այսօր իմ հոգու և մտքի մեջ: Եվ այսօր գալով մեր Մայր Հայրենիքից, մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, ուզում եմ, որ բոլորդ էլ զգաք, որ այդ տունը ձեր տունն է, այդ Հայրենիքը ձեր Հայրենիքն է, ինչ էլ որ լինեն մեր պատմական զարգացման եղանակները:

Ես շատ ուրախ եմ, որ այս առիթով այստեղ է նաև իմ սիրեցյալ եղբայր Գասպարյան Կաթողիկոս-Պատրիարքը, որի հետ երկար տարիների մտերմություն ունենք: Ես կրկին իմ խորը ուրախությունն եմ հայտնում ձեր մեջ գտնվելու այս գեղեցկագույն առիթի համար և մաղթում, որ Աստված օրհնի ձեր բոլոր գործերը, և արժանավորաբար կրեք Մխիթարյան ավանդների ժառանգորդը լինելու պատիվը. Ամեն»:

Այս մտերմիկ հանդիպումից հետո, Վեհափառ Հայրապետը Հովհաննես-Պետրոս ԺԸ Կաթողիկոս-Պատրիարքի և աբբահոր ուղեկցությամբ շուրջ մեկ ու կես ժամ շրջեց միաբանության թանգարաններում, ծանոթացավ գրադարանին և նոր հրատարակություններին:

Երեկոյան ժամը 20.00-ին վանքի սեղանատանը տրվեց պաշտոնական ընթրիք՝ ի պատիվ Հայոց Հայրապետի: Ընթրիքին հրավիրված էին Վիեննայի արքեպիսկոպոս Քրիստոֆ Շյոնբրոնը, կարդինալ Քյոնիգը, Վիեննայի պապական նվիրակը, << դեսպանն ու դեսպանատան աշխատակիցները, Լիբանանի Հանրապետության դեսպանը, «Pro Oriente»-ի պատասխանատուները և մեծ թվով հյուրեր, վանքի բարերարներ:

Հյուրասիրության ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ աբբահայր Պողոս վարդապետը, որ իր և միաբանության անունից շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին այս ուրախառիթ այցելության համար: Այնուհետև իր սրտի խոսքն ասաց Վատիկանի դեսպան և Վիեննայում պապական նվիրակը, որ Վեհափառ Հայրապետին նախ փոխանցեց Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Պապի եղբայրական ողջույնները, ապա վեր հանեց Գարեգին Հայրապետի միջեկեղեցական ասպարեզում, Եկեղեցիների միջև փոխադարձ գործակցության և առավել մերձեցմանն ուղղված ջանքերն ու նախանձախնդրությունը, ասելով. «Մենք ուշի-ուշով հետևեցինք Գրացի Բ ժողովին և պետք է ասել, որ Ձերդ Սրբության դասախոսությունը գերազանցեց ամեն ինչ: Պետք է ասել, որ աշխարհայնացող այս

ժամանակաշրջանում այն նոր մտածողության առիթ տվեց բոլորիս: Դուք իրավամբ շեշտեցիք քրիստոնեությունը և քրիստոնեական միությունը խոսքից և բանաձևումներից առավել կյանքով վկայելու և կյանքով ապրելու անհրաժեշտությունը»:

Ընթրիքի վերջում ներկաներին իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի ներկաներ՝ անդամներ Մխիթարյան միաբանության, հոգևոր եղբայրներ և հյուրեր: Սա իմ վերջին ընթրիքն է Վիեննայում ձեզ հետ միասին այս այցելությանս ընթացքին: Ես խորապես զգացված եմ և շնորհակալ այն բարի, ջերմ և սրտակից խոսքերի համար, որ այստեղ արտահայտվեցին: Նաև մասնավոր շնորհակալություն Հայր Պողոսին և Մխիթարյան միաբանության անդամներին այսքան սրտաց և անկեղծ վերաբերմունքի համար, որ ցուցաբերեցին Հանդեպ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որով իրենց հարգանքն են ցույց տալիս Սուրբ Էջմիածնի և Մայր Հայրենիքի նկատմամբ:

Եվ ինչպես սկզբում ասացի, այս տունը մտնելուց հետո, ես իմ Հարազատ տան մեջ եմ գտնվում, որովհետև մենք ունենք հասարակաց, միասնական այնպիսի կապեր մեր հավատքի, լեզվի, մշակույթի, ինքնության գիտակցության մարզերի մեջ, որովհետև մենք չենք կարող այլ կերպ լինել, եթե հավատարիմ ենք մեր դարավոր ինքնությանը:

Այս օրը, ճիշտ է, ինչպես Հայր Պողոսն ասաց, պատմական չէ այն իմաստով, որովհետև հարազատ տնից հարազատ տուն եմ գալիս, սակայն հսկա տարբերություն կա: Այդ այն է, որ այսօր ես գալիս եմ նոր Հայաստանից, գալիս եմ ոչ թե այն Աթոռից, որ ոչինչ չէր կարող անել առանց թույլտվության և պաշտոնական ձևակերպումների, այլ ազատ, վերանորոգվող Մայր Աթոռից: Ես գալիս եմ ձեր և մեր բոլորիս հասարակաց մեկ Տնից: Այսօր այդ Տունը բոլորիս անխտիր կարիքն ունի: Հետևաբար կերպարանափոխված հոգով լծվենք այդ անանցանելի Տան հոգևոր և ազգային շինարարության գործին»:

Ապա Վեհափառ Հայրապետը ֆրանսերենով իր խոսքն ուղղեց և մտածումները կիսեց օտար հյուրերի հետ: Նորին Սրբությունը Վատիկանի դեսպանին դիմեց՝ իր եղբայրական ողջույնները փոխանցել Հովհաննես-Պողոս Բ Պապին, ինչպես նաև Վիեննայում անցկացրած այս մի քանի օրերի և ջերմ ընդունելության համար իր շնորհակալությունները հայտնեց Շյոնբյոռն արքեպիսկոպոսին, կարդինալ Քյոնիգին, «Pro Oriente» կազմակերպությանը, ասելով. «Մենք այսպես եղբայրական սերտ համագործակցությամբ՝ սիրտ-սրտի և ձեռք-ձեռքի պիտի ապացուցենք աշխարհին, որ մեկ նպատակ ունենք և հավատարիմ ենք Աստուծո կոչին»:

Ուշ երեկոյան ավարտվեց այս սիրո ճաշն ու յուրատեսակ ողջերթի ընթրիքը, որով և եզրափակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Հայրապետի այցելությունը Ավստրիա՝ Գրաց և Վիեննա քաղաքները, որը կարելի է ասել, նոր հորիզոններ ու գործունեության դաշտ բացեց Հայ Եկեղեցու համար, ինչպես նաև տեղիք տալով բացում խորհրդածությունների այսօրվա քրիստոնյա աշխարհում և Եկեղեցիների կյանքում տիրող խնդիրների շուրջ:

ՀՈՒԼԻՍ 1, ԵՐԵՔՇԱԲԹԻ

ՄԵԿՆՈՒՄ

Հուլիսի 1-ի առավոտյան, հրաժեշտ տալով Վիեննային, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա՝ նախագահելու Կրեմլի «Ուսպենյան» թանգարանում «Հայ Եկեղեցու գանձերը» ցուցահանդեսի բացման արարողությանը: Նորին Սրբությանը ճանապարհելու էին եկել Ավստրիահայոց Առաջնորդ և Կենտրոնական Եվրոպայի Հայրապետական պատվիրակ Մեսրոպ արք. Գրիգորյանը, Վիեննայում ուսանող Մայր Աթոռի միաբան Մաշտոց աբղ. Ժողոյանը, «Pro Oriente»-ի ներկայացուցիչները, ՀՀ դեսպան Աշոտ Ոսկանյանը, խորհրդական Սամվել Մկրտչյանը, թեմի վարչության ատենապետ Արմեն Ութուճյանը, բարերար Վլադիմիր Հարությունյանը և ուրիշ ազգայիններ ու բարերարներ: